

ԱԶԳՕԳՈՒՏ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

ԲԱՐԵՍԻՐՏ ԱՍԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒ ՌԻՃԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԵՆԸ

Մենք 1 իրանանը կամ Սուրիան մեզ հայերու համար տեա-
կանորէն բնակելի վայր մը դարձած ըլլալը աշխարհ անվիճելի իրո-
ղութիւն մըն է. ոչ մէկ հայ անհատ չի պիտի համարձակէր այս
երկրին իրեն ընծայած ասպետականութեան մասին կասկածող վարձուք
գոյց տալ. ընդհանրապէս, 1 իրանանցի ժողովուրդին հայերուն հանդէպ
բռնած ասպնջական վայել ընթացքը, փոխադարձօրէն, երախտագիտու-
թեամբ պէտք է ողջոյնել, եւ հայը չի պիտի վարանի իր շինարար
բազուկով փոխադարձել աշխարհ անվիճելի եւ գերմարդկային ժէսթ մը.
Երբ վայրկեան մը փորձենք մեր մօտիկ անցեալը վերջիշել,
պիտի տեսնենք որ, թէեւ մէկ կողմէն տառապանքն ու զրկանքը մեր
անբաժան ճակատագրականութիւնը դարձած իսկ միւս կողմէ գտնուած
են այնպիսի անվիճելի զգացումի տէր ցեղեր, որոնք բարեարտութիւնը ի-
րենց համար յոյժ պարտականութիւն նախահամարելով, չեն ուզած
լքել հայ ազգը եւ բերեցան անգամներ բարոյական, կրթական տեսա-
կէտով սատար հանդիսացած են իրեն. հայ սրտերուն մէջ դեռ թարմ
իրողութիւն կը մնայ Ամերիկեան ժողովուրդին Հայաստանի ներքին
գաւառներէն ներս կառարած ինքնաբերական առաքելութիւնները, որոնց
չնորհիւ ամբողջ սերունդ մը դէպի լուսաշխարհ կը ծլէր:

Միթէ Խարբերդի Եփրատ գօլէճը, Այնթապի, Մարգուանի եւ
ուրիշ շատ մը վայրերու մէջ Ամերիկեան ազգի մարդասիրական ձեռ-
նարկներով կառուցուած կրթական հաստատութիւնները բաւական փա-
տեր մը չէին մեզ հաւաստելու թէ՛ այդ ցեղին գոյրդուրտ մէկ նա-
ուածքը դէպի հայր. զուտ բարեօրինակն ու անկեղծ արտայայտու-
թեան մարմնացում մըն էր, եւ կը կարծեսէ որ, նոյն այդ գեր-
ազնիւ զգացմանց տէր եղող ժողովուրդ մը, զուցէ այսօր, նոյնքան եւս
առաւել չի պիտի ուզէր գոյրդուրալ մեր վրայ ու քար անտարբերու-
թեամբ միայն ականատես ըլլար տառապանք ցեղի մը նորահաս սե-
րունդին կծկմանքին, որոնք, անյաբարէն ինքզինքնին ծարաւի կ'զգան
կրթական անոշարդի մթնոլորտներու, եւ աւանդ որ, թափառականի ի-
րենց կեանքը միջոց չէ տուած ծարաւին յագեցնելու համար:

1 իրանանի եւ Հոգատար Իշխանութիւնք երկրիմ շինարար սարքը
կոչած են մեզ հայերս, քաջայոյս ենք որ մօտիկ ապագային պիտի
կարենանք արժեքներ մենք զմեզ այդ ուղղութեամբ եւ ամօթագարտ
չի պիտի ելնենք մեր վրայ դրուած յոյսերու փոխան, որու իրականա-
ցումը մեծ հաւաստիքը նկատել մեր եւ տեղացի բնիկ ժողովուրդին
հանդէպ տածած անկեղծ սիրոյ եւ համակրանքի. այս մասին բնաւ կասկած
չունինք, արդէն մօտաւոր պատմութիւնը իր արդար վճիռը արձանագրած
պիտի ըլլայ լայն էջերու չափով:

Այժմ, մեզ հարկաւորը, ինչպէս որ ըսինք, մեր նորահաս սերուն-
դին կրթական մակարդակը աւելի տոհմային, աւելի բարձր դիրքի
վերածելն է:

Պէտք է, երկու մեծ համալսարաններով օժտուած բախտաւոր կեդ-
րոն քաղաք մը ըլլալուն հոս, մեծ առիթներ կան հայ երիտասարդ-
ներու գիտական պաշարը ապահովելու գործին տեսակետով, այս ան-
ուրանալի բախտաւորութեան մօտ, դարձեալ կենսական պարագայ մը
կայ, զոր անտես առնուած է—անշուշտ մեր կա՛քէն անկախ—եւ որը մեր
սոյն տողերուն բուն նիւթը կը կազմէ:

Հայ բժիշկը, դեղագործը, ատամնարոյժը եւ այլն, երբ իրենց ճիւղը
յաջողապէս կ'աւարտեն, գիտական պաշարով օժտուած, զօրախտարար,
մայրենի լեզունին անկատար չափով մը իւրացուցած, ի վիճակի չեն ըլ-
լար իրենց գիտութենէն օժտել տալ իրենց ընտանիքները նաեւ:

Մայրենի լեզուն զօրաւորապէս արմատաւորուելու է հայ մանկ-
արւոյն, պատանիին կամ երիտասարդին մօտէն ու գանկին խորը, այլա-
պէս, անոր համար զօրաւորին պայմաններ կ'ստեղծուին օտար կրթական
հաստատութեանց մէջ բոլորովին անօժանօթ գիտութեանց տիրանալու պա-
հուն: Ուսումնասիրող երիտասարդը երբ տկար եւ անկատար դուրս գայ իր
սիրած ճիւղով, զայն մեղադրելու պատճառ մը չունինք, քանի սոյն
այլանդակ պայմաններու տակ հազիւ թէ մէկը կարող ըլլայ կեան-
քի պայմաններ փարել ու լաւագոյն ասպարէզ ապահովել ինքզինքին
համար:

Աճէն ազգ, որպիսի խնայողութիւններ իսկ կրէ, իրեն գոյութիւնը
մշտնջենապէս ապահովող եւ զայն տեւականօրէն պատսպարող ամենա-
զօրաւոր ազգակը, իր Մայրենի լեզունը կը կազմէ: Օտար լեզունց
ուսուցումը ամէն անհատի հարկաւոր է, միմիայն, իր տեղին եւ իր
ժամանակին:

Այսօր, հայ ազատ—արուեստեաններու ուժեղ բանակ մը կայ, ունի
առաւելագոյն տոկոսը օտար լեզուաբար իրենց ուսումնական օրացած ըլ-
լալով, պէտք եղածին չափ հնարաստութիւն չունին միտքերին, գիտ-

ցածնին, օրապայտել, որով, ցեղակիցները ոչինչով կ'օգտուին անոնցմէ.
հազիւ հրապարակի վրայ մի քանիներու ծանօթ ենք, որոնք զբոլ
կամ զանազան հրատարակութիւններով երբեք ի յոյս կ'ընծայեն սով-
րածնին, այսպիսիներն ալ, նախապէս կամ Լաբրատի, կամ Այնթապի զօ-
լէճներէն շրջանաւարտ են:

Վերջիշեալ կրթական հաստատութիւնները մեծագոյն ծառայու-
թիւններ մատուցած են հայ ժողովուրդի ուսմանը կարօտ զաւակներուն,
զօրախտարար, ներկայիս այդ մատուցողական պաշար արտադրող զոյգ հիմ-
նարկութիւններէն եւ ոչ մի կանգուն կը մնան. անոնց կարգին քանդուեցան
նաեւ Տարսնի, Վոնիայի, Խղմիրի բարձրագոյն վարժարանները, որոնք Ա-
մերիկեան ազգի ցեղի բարեխնամ զաւակներու թանկագին նիւթաբար-
յական աջակցութեամբ միայն կը շարունակուէին: Իրենց գոյութիւնը կան-
գուն պահել: Այդ հաստատութիւննց հաշուին ծախսուած դուրանները քիչ
չէին, թէեւ այսօր այդ դուրաններուն տոկոսն իսկ չ'արժող չնչին նպաստե-
րով միայն մի քանի հաստատութիւններ կ'օգտուին միեւնոյն աղբիւրէն,
բայց կարեւորագոյնը, կենսական կարենալ գիտնալն է թէ, այն բարեխիտ
Ամերիկացիները, որոնք ստանձնած էին առաւելագոյն չափով եւ աւելի
մեծ զօհողութիւններ, այժմ ինչ կը մտածեն քարուքանդ եղող հաս-
տատութիւններու մասին, արդեօք, չի պիտի ուզէին այդ բոլորին փոխա-
րէն, կամ անոնց յիշատակը յաւերժացնող նոր մը եւս կառուցանել նոյն
երկրի մը մէջ. մենք, լիայոյս ենք որ, այդ քանդող կրթական հաստա-
տութիւններու հոգատար եւ բարեխիտ Ամերիկացի յարգելի անձնաւորու-
թիւնները չի պիտի վարանէին մեր բարեխիտարար եւ խիստ ազգօգուտ
առաջարկը զործարարութեան գնել, որոնց կանխաւ երախտագարտ կ'զգանք
ինքզինքնին:

Խնդիրը շատ պարզ է. Պէտք է Ամերիկեան համալսարանի կող-
քին Հայկական բաժին մը կանգնեցնելուն վրայ կը կախնայ. այս քան
բարենպաստ ձեռնարկի մը յաջողութիւնը ապահովելով՝ մեծագոյն ե-
րաշխիքը պիտի համարել Ամերիկեան ազգին Հայոց հանդէպ տածած
սիրոյ՝ եւ համակրանքին, որու անխախտօրէն համոզուած ենք:

Այն առթիւ թող ամերիկեան համալսարանի հայ ուսանողութիւնը
եւս շարժի անհրաժեշտ միջոցներ գործածէ եւ ի հարկին նոյն ուղղու-
թեամբ բրոպական մղէ, որպէսզի, մօտիկ ապագան ողջունէ նպատակին
կատարելագործումը. տեղւոյն Հայ Ուսանողական Միութեան վրայ պար-
տականութիւն կ'իյնայ իր բոլոր ջանքերը ի սպաս դնել մեր առաջար-
կին իրագործմանը համար:

Մենք, տարբեր յօդուածով մը պիտի անդադառնանք նաեւ Պէյ-
րութի Ֆրանս. համալսարանին շուրջ, որը, նոյնքան եւս առաւել իր
հետաքրքրէ հայ ուսանողութիւնը:

Երեսօսհամանի, մասնաւորապէս Ամերիկայի հայ մամուլը մի-
եւնոյն ուղղութեամբ աշխատանք թափելու է. այդ անդերու Ուսանող-
ական Միութիւններն ալ իրենց կարելիութեան սահմանով աջակցե-
լու են դրական արդիւնք մը ձեռք բերելու համար. մասնաւոր Լաբ-
րատի, Այնթապի, Վոնիայի, Տարսնի, Մարգուանի եւ այլն գօլէճներու
շրջանաւարտ կամ կիսաւարտ աշակերտները բուն կերպով բրոպական
մղելու են: Մեր առաջարկը խիստ ազգօգուտ եւ նպատակը բարի է.
որեմն շարժինք:

ՄԻՋԻՍ ՍՆԱՆՆԵՐԵՆ

ՀԱՄԵՍՏ ԹԵԼԱԿԱՆԱՐԵՆԸ
Շատ ցաւալի վիճակ մը կը ներկա-
յացնէ Դաւանդաբի մեր երեսօսաբ-
նութեան կեանքը. որուն մէջ կը գտնու-
նուին նաեւ շարք մը պատանիներ:

Նպատակը պատկերասրահ չէ ամ-
բողջութեամբ տեղի ունեցող անվայել
գործերը, եւ թողտուրած ալ չեն ծը-
րէք երկտեղ գրութիւն, քանի որ
«Լիբանանի» ամէլ օրէնակները չեն
ներկայ օր աւելի դրեմ:

Միայն կարկ կ'զգամ ըսելու մեր
յարգելի երեսօսաբնութեան թէ՛ օր-
ձաքանը կրնա՞յ ընկերային հաւաքա-
վայր մը նկատուիլ ուր կրնան յաճա-
խել ամէն դասակարգի պատկանող
մարդիկներ:

Գաղութիւնը մտադրութիւն չուն-
նի՞ երբեք որ երեսօսաբնութեան օգը-
նաբան այցելեն, միեւնոյն տան
այցելուին ալ դէմ չեն կրնար արտա-
յայտուիլ, քանի որ շատ քաջ գիտեմ
թէ ժամանակներու բերմամբ Դաւան-
դաբնութիւն երեսօսաբնութիւնը զրկե-
լու է մասնաւոր եւ տեւական քնքեր-
քառանք մը կամ զուարճութիւն մը ու-
նենալէ այդ կամ այն պատճառներով,
սակայն սո ալ չի մոռնալ չեղեալ
թէ՛ մարդը ուր որ գտնուի նորէն չը-
պէտք է ձեռքէն թողու քաջապալա-
քութեան սանձը:

Այժմ գտնանք մեր բուն նիւթին—
Ընտանեկան հաւաքումը չի նա-
հել քննարկելու, քաջապալաք յար-
կը:

որովայն մէջ տեսնող հոգաւոր որոնք
պատկու ունեցած են ճաշակելու իրա-
կան կեանքի այդ քաղցրութեան դո-
լութիւնն ու երկանդութիւնը: Ընտա-
նիքի մը հայրը կամ զեղալուրը իր
սան մէջ պէտք չէ դրեմ թէ՛ այնպիսի
անյարժար բառեր օրանք բնական
բոյնիս անհամապատասխան են եւ այդ
բառերու հնչումէն նոյնիսկ ինչն աւել
զամ քաղցրութիւն է՝ օրովեւեռ ինքը
իր լեզուով իսկ բարոյական անկման
կամար հող մը պատրաստած կ'ըլլայ:

Ուստի յարգելի երեսօսաբնութեան
ուղղութեան կը յանձնեմ կեանքի
շատ կարեւոր կենսական կէտերը.
Դուք իրեք նորաւոր սերունդի
ներկայացուցիչներ ալ չեն զննվ պէտք
է որ ջանաք անտարտ պահել մեր
ազգիս բոյնիս առողջութիւնը: Եւ
բուն գործունեան պակասը միշտ աւել
նինք գործախտաբար:

Դուք պիտի ըլլաք մեր կրթական
ազգային մտաւորական աշխատանքի,
մեր ճշգրտած քննիչ տնտեսական ու
քաղաքական բարեկաման պաշտպան
ու առաջնորդը:

Այդ մը չէ կարելի իր ճակատու-
ղիքը զեղալուրը, իր վերջնական, իր
կատարելալ ազատութեան տէր դաս
նալ եւ չի կրնար փրկել այն՝ անհա-
մար տարիներու բանաւթեան ծանր
չգիտան, իր չունենալ կրթութիւն, քա-
ղաքապալաք, լուսաւորացած եւ ա-
ռողջ մտայնութեան տէր երեսօսաբ-
նութիւն մը կ'զգարի: Գ. Մ. ԺԵՐԵՅԱՆ

